

ՀԱԳՄՉ 08.50

Առաջին հրատարակություն
23 դեկտեմբերի 2003թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում՝ ականների վտանգների մասին իրազեկման նպատակով

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակասականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում՝ ականների վտանգների իրազեկման նպատակով.....	6
1. Ծավալ.....	6
2. Փաստաթղթեր	6
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	6
4. Կարիքների գնահատում	7
5. Հիմնական սկզբունքներ	8
6. Տվյալների հավաքագրում	9
6.1. Տվյալների հավաքագրման էթիկա	9
6.2. Հավաքագրման ենթակա տվյալներ.....	9
7. Ուղղորդող սկզբունքներ	12
7.1. Շահառու կողմերի ներգրավում.....	12
7.2. Համակարգում	12
7.3. Ինտեգրում	13
7.4. Համայնքի մասնակցություն և լիազորում	13
7.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում	14
7.6. Թիրախի ճիշտ ընտրություն	14
7.7. Կրթում/իրազեկում	15
7.8. Ուսուցում	15
8. Պարտավորություններ	16
8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն	16
8.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՍ).....	16
8.3. ԱՎԻ կազմակերպություն	17
8.4. Դոնորներ.....	17
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	18
Հավելված Բ (Ճանաչողական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	19
Փոփոխությունների գրանցում	24

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաձևերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Կարիքների գնահատումը և տվյալների հավաքագրումը ականների վտանգների իրազեկման (ԱՎԻ) ցանկացած ծրագրի կամ նախագծի կարևորագույն մասն է և թույլ է տալիս ԱՎԻ կազմակերպությանը պլանավորել, իրականացնել, մշտագննել և գնահատել իր գործունեությունը:

Կարիքների գնահատումը պետք է ընկած լինի ցանկացած ԱՎԻ ծրագրի կամ նախագծի պլանավորման հիմքում: “Դա, ըստ էության, խնդրի սահմանման, ըմբռնման և լուծման նպատակով գործողությունների շարքի պլանավորման գործընթացն է”¹: Կարիքների գնահատումը պետք է բխի բազմաթիվ շահագրգիռ մարմինների հետ խորհրդակցության արդյունքում հավաքագրած տվյալներից և կարող է հիմնվել ազգային մարմիններից մինչև տուժած համայնքները հավաքագրած տվյալների ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային աղբյուրների վրա:

Թեև կարիքների գնահատումը պետք է նախորդի ԱՎԻ ծրագրի կամ նախագծի պլանավորմանը և իրականացմանը, այնուամենայնիվ, դա միանգամյա գործողությունն է, այլ շարունակական միջոցառում, որի նպատակն է ուսումնասիրել վտանգված համայնքի կամ համայնքների տարաբնույթ կարիքները, խոցելի հարցերը և ակնկալիքները:

Որպեսզի ծրագիրը կամ նախագիծը չշեղվի իր բուն նպատակից, այն է՝ ԱՎԻ-ից, հարկավոր է գնահատել հավաքագրած տվյալների կարևորությունը և օգտագործումը: Սակայն, հակաականային գործողությունների և մարդասիրական ծրագրերը և նախագծերը, նույնպես կարող են օգտվել այս տեղեկություններից, ուստի դրանք պետք է տրամադրվեն այդպիսի ծրագրերին և նախագծերին՝ գործողությունների անտեղի կրկնություններից խուսափելու համար:

Սույն չափորոշիչի նպատակը կարիքների գնահատման և տվյալների հավաքագրման համակարգի ստեղծման գործում ընդհանուր և հետևողական մոտեցում ապահովելն է: Չափորոշիչն ուղղորդում է թե ԱՎԻ ծրագրեր և նախագծեր իրականացնող կազմակերպություններին, և թե նրանց, ովքեր ցանկանում են կապել ԱՎԻ-ն հակաականային գործողությունների ընդհանուր գնահատման (ՀԱԳԸԳ) գործընթացի հետ՝ հակաականային գործողության ծրագրի պլանավորման նպատակով: Սույն չափորոշիչը պետք է ուսումնասիրվի ՀԱԳՄՉ 08.10՝ Հակաականային գործողությունների ընդհանուր գնահատում չափորոշիչի հետ համատեղ:

1. Բրնեթի ինստիտուտ, «Ականների/ՉՁ ռիսկի կրճատման վերաբերյալ իրազեկման աշխատանքում մասնակցային մոտեցում կիրառելու վերաբերյալ ուղեցույց», նոյեմբեր, 2001թ

Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում՝ ականների վտանգների իրազեկման նպատակով

1. Ծավալ

Այս չափորոշիչի նպատակն է ապահովել կարիքների գնահատման և տվյալների հավաքագրման համակարգի ստեղծման ընդհանուր և հետևողական մոտեցում:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականների վտանգի մասին իրազեկում» (ԱՎԻ) նշանակում է գործողություններ, որոնք նպատակ ունեն կրճատել ականներից/ՊՊՄ-ից առաջացող վնասվածքների վտանգը՝ բարձրացնելով իրազեկվածության աստիճանը և քարոզելով վարքագծային փոփոխություն, այդ թվում հանրային տեղեկատվության տարածում, կրթում և դասընթացների անցկացում, ինչպես նաև ականազերծման գործողությունների ընթացքում համայնքի հետ կապի ապահովում:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՍ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՍ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՍ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը: Այդպիսի դեպքերում ՄԱԿ-ը պետք է տրամադրի անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն, այդ թվում համապատասխան որակավորում ունեցող կադրեր, որոնք ունեն ԱՎԻ փորձ:

“Նախագիծ” տերմինը նշանակում է գործողություն կամ փոխկապակցված գործողությունների շարք, որը հետապնդում է համաձայնեցված նպատակ: Նախագիծը, որպես կանոն, ունի հստակ սահմանված տևողություն և աշխատանքային ծրագիր: Նպատակի հաջող իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, սովորաբար որոշվում և համաձայնեցվում են նախքան նախագծի մեկնարկը²:

“Ծրագիր” տերմինը վերաբերում է կազմակերպության միջինից - երկարաժամկետ գործողություններին, որոնք ուղղված են կազմակերպության տեսլականի և ռազմավարական նպատակների իրականացմանը: Հակաականային գործողությունների ծրագիրը բաղկացած է հակաականային գործողությունների մի շարք նախագծերից: Նույն կերպ, ԱՎԻ ծրագիրը բաղկացած է ԱՎԻ նախագծերի շարքից:

4. Կարիքների գնահատում

ԱՎԻ համատեքստում կարիքների գնահատման նպատակն է հայտնաբերել, վերլուծել և առաջնահերթել ականների և պատերազմից մնացած պայթուցիկ զինամթերքի (ՊՊՄ) տեղական ռիսկերը, գնահատել համայնքների կարողությունները և խոցելիությունը, ըստ այդմ ընտրելով ԱՎԻ իրականացման տարբերակները: Կարիքների գնահատումը թույլ կտա ձեռք բերել ԱՎԻ նախագծերի խնդիրների, ծավալների և արդյունքի ձևերի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները: Այն պետք է հիմք ծառայի՝ գերակա կարիքները և դրանց արձագանքելու օպտիմալ եղանակները որոշելու համար, ինչպես նաև հանդիսանա մեկնարկային տեղեկատու աղբյուր՝ հետագա մոնիտորինգի և գնահատման համար:

Կարիքների գնահատումը պետք է հիմնվի թե առաջնային և թե երկրորդային տեղեկությունների վրա: Առաջնային տեղեկությունները ներառում են անմիջապես համայնքի մակարդակում հավաքագրված տվյալները, իսկ երկրորդայինը՝ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները, ինչպես օրինակ հակաականային գործողությունների տվյալների բազան կամ այլ գերատեսչական և պետական աղբյուրները: Կրկնություններից խուսափելու համար ԱՎԻ կազմակերպությունները պետք է պարզեն այլ դերակատարների ներուժը, որպես տեղեկությունների փոխանակման գործընկերներ: Սա հատկապես կարևոր է ճգնաժամային և անկայուն իրավիճակներում, երբ ժամանակը սահմանափակ է, իսկ ռեսուրսները գերլարված:

2. Ականազերծման գործողությունների համատեքստում նպատակի սահմանման եղանակը, նպատակի իրականացման ձևը և անհրաժեշտ ռեսուրսները, սովորաբար կոչվում են «նախագծի/ծրագրի առաջարկ» կամ «նախագծի փաստաթուղթ»:

5. Հիմնական սկզբունքներ

Համայնքի վրա հիմնված և ինտեգրված կարիքների գնահատումը բոլոր ԱՎԻ նախագծերի հիմքն է և թույլ է տալիս կատարել ԱՎԻ ամբողջ ծրագրի տեղեկացված պլանավորում, իրականացում, մոնիտորինգ և գնահատում՝ հակաակնային գործողությունների ավելի լայնածավալ ծրագրի շրջանակներում:

Կարիքների գնահատումը պլանավորելիս հարկավոր է հաշվի առնել ՀԱԳԸԳ ժամանակ ձեռք բերված տեղեկությունները, ինչպես օրինակ արտակարգ իրավիճակների կամ ականների ազդեցության հետազոտման (ԱԱՀ) ընթացքում ստացված տվյալները կամ հակաակնային գործողությունների տեղեկատվության կառավարման ազգային համակարգում մուտքագրված տվյալները: Պլանավորման ընթացքում հարկավոր է հաշվի առնել նաև այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները, ինչպիսիք են հիվանդանոցները, մարդասիրական կազմակերպությունները և պետական գերատեսչությունները:

Գնահատման պլանում պետք է հստակ սահմանվեն՝

- ա. Տվյալների հավաքագրման նպատակը,
- բ. Ինչ տվյալներ պետք է հավաքագրվեն,
- գ. Ինչպես և որտեղից պետք է տվյալները հավաքագրվեն (օրինակ տվյալների հավաքագրման եղանակների ընտրությունը, ծածկույթը, հիմնական տեղեկատուների ընտրությունը),
- դ. Ովքեր պետք է հավաքագրեն տվյալները և ինչպիսի մասնագիտական վերապատրաստում է նրանց հարկավոր,
- ե. Տվյալների հավաքագրման ժամկետները,
- զ. Ինչպես պետք է տվյալները հավաքագրվեն, ստուգվեն, ճշգրտվեն, պահպանվեն և այլն:

Հավաքագրված տվյալները պետք է վերլուծվեն և մեկնաբանվեն՝ արդյունքները ձևակերպելու և ռազմավարություն մշակելու համար: Արդյունքները պետք է տրամադրվեն պլանավորմանը մասնակցած բոլոր շահագրգիռ կողմերին, իսկ արդյունքների օգտագործումը պետք է խրախուսվի:

Գնահատման պլանը պետք է հաշվի առնի առկա ռեսուրսները (օր. Մարդկային և ֆինանսական) և ժամանակը: Հարկավոր է դիտարկել տարբեր կազմակերպությունների միջև համագործակցության և տեղեկությունների փոխանակման հնարավորությունները (օրինակ համատեղ գնահատում): Նախքան կարիքների գնահատումը ԱՎԻ նախագծի ղեկավարը պետք է որոշի, թե արդյոք գնահատումը պետք է տևի օրինակ երկու օր՝ գրասենյակի ներսում, թե երեք ամիս՝ ներառելով դաշտային հետազոտումը:

Կարիքների գնահատման միջոցով պետք է հավաքագրվեն տեղեկություններ, որոնք կարող են օգնել գնահատելու նախագծի կենսունակության աստիճանը: Այդ նպատակով գնահատման ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալի վրա՝

- ա. Հնարավոր ֆինանսավորման աստիճանը, այդ թվում դոնորներից և միջազգային կազմակերպություններից բոլոր ռեսուրսները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կապահովեն նախագծի երկարաժամկետ կենսունակությունը,

- բ. Տեղեկությունների փոխանակման նպատակով համապատասխան գործընկերների հայտնաբերումը և այլ կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունը,
- գ. Ազգային համագործակցության աստիճանը, այդ թվում պետության քաղաքական և ֆինանսական օժանդակությունը, հմտությունների և գիտելիքների առկա մակարդակը և կարողությունների զարգացման հնարավորությունը, հակասկանային գործողությունների ազգային չափորոշիչների առկայությունը կամ դրանց մշակման հարցում օժանդակությունը,
- դ. Կարիքների տարբերակում ըստ համատեքստի, այսինքն ինչ միջավայրում է նախագիծն իրականացվելու, ինչպես օրինակ շարունակական հակամարտություն, հետևյալ ֆիլիտային արտակարգ իրավիճակ, անցում և վերականգնում կամ զարգացում:

6. Տվյալների հավաքագրում

6.1. Տվյալների հավաքագրման էթիկա

Տվյալների հավաքագրման ժամանակ հարկավոր է կիրառել հետևյալ հիմնական սկզբունքները՝

- ա. Երբ տվյալները հավաքագրվում են երկրորդային աղբյուրից, հարկավոր է ամբողջական հղում կատարել տվյալի հեղինակ հանդիսացող սկզբնաաղբյուրին,
- բ. Երբ տրամադրվում է գաղտնի տեղեկություն, ապա այն տրամադրողի ցանկությունը գաղտնիության պահպանման վերաբերյալ հարկավոր է ապահովել,
- գ. Հարցազրուցավարները պետք է զգույշ լինեն տվյալները հավաքագրելիս, թիրախային համայնքում անզուշաբար սխալ տպավորություն չթողնելու համար, թե հակասկանային գործողությունները սկսվելու են անմիջապես,
- դ. Հարկավոր է ապահովել, որպեսզի համայնքները “չգերհետազոտվեն”, այսինքն այցելություն տեղի չունենա նախկինում ականագերծող կազմակերպության կողմից արդեն իսկ հետազոտված համայնք և բնակիչներին չտրվեն նույն հարցերը,
- ե. Հարցազրուցավարները պետք է պահպանեն հարցազրույցի վարման էթիկայի հիմնական կանոնները, ինչպես օրինակ լինել քաղաքավարի, հարգալից և ոչ հարկադրող:

6.2. Հավաքագրման ենթակա տվյալներ

Տվյալների հավաքագրումն ու կարիքների գնահատումը ստեղծում են այն հիմքը, որի վրա պետք է կառուցվի պլանը: Տվյալների հավաքագրումը հնարավորություն է տալիս հայտնաբերել/որոշել հետևյալը՝

- ա. *թիրախային խմբերը* (հավաքելով տվյալներ այն մասին, թե ով է վիրավորվել, ով է ռիսկի ենթարկվում, ով է տուժել ականներից և ՊՊՄ-ից),
- բ. *աշխատանքի ոլորտները* (հավաքելով տվյալներ այն մասին, թե որտեղ են մարդիկ վիրավորվում, որտեղ են վտանգները և այլն),
- գ. *ուղերձներ* (և համապատասխանաբար աշխատանքներ) ըստ թիրախային խմբերի (գնահատելով, թե ինչպես են մարդիկ վիրավորվում և ինչպես են ռիսկի դիմում),

- դ. *մոտեցումները և մեթոդաբանությունները*, որոնք կարող են հանգեցնել վարքագծային փոփոխության,
- ե. *հաղորդակցության ուղիները* և թիրախային խմբերի հաղորդակցության ու սովորելու եղանակները,
- զ. *ինստիտուցիոնալ համաձայնությունը և գործընկերությունը*՝ ԱՎԻ ուղերձները ներկայացնելու և արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով,
- է. *առկա ռեսուրսները և դրանց բաշխումը*,
- ը. *ծրագրի ժամանակացույցը* (հավաքելով տվյալներ ականների/ՊՊՄ խնդրի բնույթի և չափերի, ինչպես նաև դրանց վտանգը վերացնելու համար անհրաժեշտ ժամանակի մասին):

Գնահատումը պետք է լինի անկողմնակալ և անաչառ: Տվյալների հավաքագումն ու կարիքների գնահատումը պետք է լինի թափանցիկ գործընթաց: Այդ նպատակով կարիքների գնահատման ժամանակ հարկավոր է՝

- ա. ստորև թվարկված հարցերի ուսումնասիրման միջոցով որոշել գերակա խնդիրը՝
 - (1) *տարածվածությունը* - արդյոք ականների/ՊՊՄ խնդիրը լայնորեն տարածված է, թե՞ կենտրոնացած առանձին աշխարհագրական տարածքներում կամ հողատեսակներում: Ուր տարածքներն են ականապատված:
 - (2) *ուժգնությունը* - Որքա՞նով է խնդիրը լուրջ: Ինչպե՞ս է այն ազդում մարդկանց վրա (ֆիզիկապես, հոգեբանորեն կամ տնտեսապես): Արդյոք այն ազդում է բոլորի վրա իրենց առօրյա կյանքում, թե՞ միայն ենթակառուցվածքների, ճանապարհների կամ օրինակ տրանսպորտային միջոցների վրա:
 - (3) *ընտրողականությունը* - Արդյոք ականների/ՊՊՄ խնդիրը հատկապես ուժգնորեն սպառնում է միայն բնակչության որոշակի խմբերի, օրինակ կանանց, չքավորներին, գյուղացիներին, արտագնա աշխատանքից վերադարձածներին և այլն: Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն ականներից/ՊՊՄ-ից փրկվածները:
 - (4) *հակաականային գործողության արձագանքը* - արձագանքման ինչ աստիճան է պահանջվում՝ տարածքի ամբողջական ականազերծում, ընտրողական ականազերծում, նշագրում, ԱՎԻ, փրկվածներին օժանդակություն կամ այլ (ոչ հակաականային գործողություն) մարդասիրական միջամտություն:
 - (5) *համայնքի ինքնաօժանդակություն* - արդյոք համայնքը որոշակիորեն օգնում է սեփական խնդրի լուծմանը՝ զգուշացումների կամ անվտանգության պահպանման մասին ուղերձները մյուսներին հաղորդելու, նշագրմանը կամ գյուղի ականազերծմանը մասնակցելու միջոցով:
- բ. Վերլուծել խնդիրը՝ նկատի առնելով հետևյալ գործոնները.

- (1) *Բնապահպանական գործոններ* – ֆիզիկական առանձնահատկությունները, որոնք մարդկանց համար վտանգ են ներկայացնում, սեզոնային փոփոխությունները, որոնք մեծացնում են ռիսկը, անվտանգության փոփոխություններ, որոնք արգելափակում են մուտքը դեպի տարածքներ կամ ստիպում մարդկանց մտնել ռիսկի տարածքներ:
- (2) *Հակաականային գործողության գործոններ* – արդյոք հակաականային գործողություններն իրականացնող ծառայությունները կարող են ճիշտ արձագանքել համայնքի արտահայտած կարիքներին, արդյոք ԱՎԻ արձագանքում է թիրախային խմբերի կարիքներին և ընդունվում նրանց կողմից:
- (3) *Ինքնաօժանդակման գործոններ* – որքանով է համայնքը Ֆինքս իրեն օգնում, ինչպես օրինակ կատարում նշագրումներ կամ գյուղի ակնազերծում և արդյոք նրանք պատրաստ են տրամադրել այդպիսի գործողությունների մասին կամ դրանց արդյունքում ստացված տեղեկություններ:
- (4) *Սոցիալական գործոններ* – սոցիալական նորմերը և կարգերը, ազգականներից կամ սոցիալական լայն ցանցից ստացվող օժանդակության աստիճանը, համայնքի ներսում տարբեր խմբերի միջև փոխազդեցությունը, համայնքի դերի գերակայող մոդելները:
- (5) *Բժշկական գործոններ* – արդյոք գյուղացիները կարող են օգտվել բուժօժանդակություններից, ինչպես օրինակ առաջին բուժօգնություն կամ վերականգնողական բուժխնամք: Որոնք են նրանց մոտ գործող շտապ և անհետաձգելի բուժօգնության ընթացակարգերը և արդյոք ունեն փոխադրամիջոց, որը կարող է տեղափոխել բուժհաստատություն:
- (6) *Մշակութային գործոններ* – հավաքական արժեքներ (հոգևոր կամ այլ միասնական հավատքներ), որոնք ազդում են հասարակության վրա և թույլ տալիս որոշել, թե որ միջամտությունն է համարվում լավ, իսկ որը վատ:
- (7) *Անհատական գործոններ* - ականների/ՊՊՄ տարածքների շուրջ անվտանգ վարքագծի մասին գիտելիքների աստիճանը, անհատական վարքը, վերաբերմունքը և հավատքը, գրագիտության կամ կրթվածության աստիճանը:
- (8) *Տնտեսական գործոններ* - տնտեսական կամ կենսապայմանների ճնշումը, տնտեսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունը:
- (9) *Քաղաքական և իրավական գործոններ* – ինչ հնարավորություն ունի համայնքը մասնակցելու որոշումների կայացմանը, մասնակցությունը իրավական համակարգի ձևավորմանը և օժանդակող իրավական դաշտի առկայությունը:³

3. Բրնեթի ինստիտուտ, «Ականների/ՉԶ ռիսկի կրճատման վերաբերյալ իրազեկման աշխատանքում մասնակցային մոտեցում կիրառելու վերաբերյալ ուղեցույց», նոյեմբեր, 2001թ.

7. Ուղղորդող սկզբունքներ

Ինչպես նշված է ՏԱԿանների վտանգների մասին իրազեկման գործողությունների կառավարման ուղեցույցում (ՀԱԳՄՉ 07.11), ԱՎԻ չափորոշիչների շարքը հիմնված է ԱՎԻ պահանջների կամ սկզբունքների խմբի վրա, որոնք դիտարկվում են նախագծի շրջափուլի յուրաքանչյուր փուլում և ծառայում են որպես չափորոշիչների շրջանակ: Ատորն անդրադարձել ենք այս պահանջներից յուրաքանչյուրին՝ ուղղորդելու համար ԱՎԻ նախագծերի և ծրագրերի տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման աշխատանքների իրականացումը:

7.1. Շահառու կողմերի ներգրավում

Տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման նպատակը պետք է սահմանվի յուրաքանչյուր շահագրգիռ կողմի հետ կնքված համաձայնագրում, իսկ կատարված աշխատանքի արդյունքները պետք է ներկայացվեն յուրաքանչյուր շահագրգիռ կողմին: Սա հատկապես վերաբերում է տուժած համայնքների կողմից հավաքագրված տեղեկություններին:

7.2. Համակարգում

Արդյունավետ հակաակնալին գործողությունների կառավարման համար պայմաններ ստեղծելիս, ԱԳԱՄ-ի կամ նրա անունից հանդես եկող կազմակերպության կարևորագույն պարտականությունը համակարգման ապահովումն է: ՀԱԳԸԳ գործընթացի ժամանակ հարկավոր է ստեղծել ընդհանուր շրջանակը, որը կուղղորդի հակաակնալին գործողություններ իրականացնող կազմակերպությունների աշխատանքները: Բացի այդ, հարկավոր է խրախուսել համակարգված կամ համատեղ տվյալների հավաքագրումը և կարիքների գնահատումը, մասնավորապես ականագերծման և տուժածների օգնության համատեքստերում:

Համակարգման ներուժը բարձրացնելու նպատակով ԱԳԱՄ-ը պետք է տրամադրի հակաակնալին գործողություններ իրականացնող բոլոր կազմակերպությունների ցանկը՝ նրանք աշխատանքների մանրամասն նկարագրությամբ:

ԱՎԻ նախագծեր իրականացնող կազմակերպությունները պետք է կարիքների գնահատման նպատակով տեղեկությունները հավաքելիս և վերլուծելիս լայնորեն համակարգեն իրենց աշխատանքը: Մասնավորապես նրանք՝

- ա. պետք է օգտագործեն առկա գնահատումների տվյալները, երբ այդպիսիք ձեռքի տակ կան, և խուսափեն անտեղի կրկնություններից: Երկրորդային տվյալներ օգտագործելիս հարկավոր է ստուգել դրանց հավաստիությունը և արդիականությունը:
- բ. պետք է մյուսներին տրամադրեն իրենց կատարած գնահատումների արդյունքները, մասնավորապես տեղեկություններ տրամադրեն ԱԳԱՄ-ին և հետադարձ կապ ապահովեն,
- գ. կարող են նախատեսել համատեղ կարիքների գնահատում:

Համակարգումը խթանելու նպատակով նախագծերի ղեկավարները կամ ԱՎԻ իրականացման համար պատասխանատուները պետք է որոշեն պոտենցիալ գործընկերներին և նրանց հետ քննարկեն պոտենցիալ լուծումները: Այդ անելիս նրանք պետք է պարզեն գործընկերությանը խոչընդոտող և նպաստող հանգամանքները, ինչպես նաև որոշեն գործընկերության տևողությունը և նպատակը: Այդ առումով կազմակերպությունը պետք է հաշվի առնի նաև ընտրված գործընկերոջ միջամտությունը կարճաժամկետ, միջամտակետ և երկարաժամկետ կտրվածքներով (արտակարգ իրավիճակների, անցման և վերականգնման, ինչպես նաև զարգացման համատեքստերում):

7.3. Ինտեգրում

Հակաականային այլ գործողությունների, ինչպես նաև այլ ոլորտների հետ ԱՎԻ ինտեգրման նպատակով՝

- ա. Կարիքների գնահատման ժամանակ հարկավոր է տեղեկություններ հավաքել ոչ միայն ԱՎԻ-ից և հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպություններից, այլ նաև ուրիշ համապատասխան կազմակերպություններից և մարմիններից (օրինակ ոստիկանություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, գյուղատնտեսություն, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, հիվանդանոցներ և վերականգնողական կենտրոններ):
- բ. Գնահատումների միջոցով հավաքված ականների/ՊՊՄ տուժածների մասին տվյալները պետք է ներկայացվեն ազգային չափորոշիչների համապատասխան (եթե կան այդպիսիք): Ականների/ՊՊՄ տուժածների մասին ընդհանուր բնույթի տվյալները պետք է, անհրաժեշտության դեպքում, տրամադրվեն ԱԳԱՄ-ին կամ այլ ազգային մարմնի:
- գ. Գնահատումների միջոցով հավաքված ականների/ՊՊՄ-ի առումով կասկածվող տարածքների մասին տվյալները պետք է ներկայացվեն ԱԳԱՄ-ին, որը պետք է դրանք տրամադրի հակաականային գործողություններ իրականացնող բոլոր կազմակերպություններին: Կասկածվող տարածքների մասին ԱԳԱՄ-ին տրամադրած տվյալները պետք է լինեն հնարավորինս ճշգրիտ և արդիական: Հավանաբար ԱՎԻ կազմակերպությունները դասընթացի (օրինակ քարտեզների վերձանում և կորդինատային տեղեկությունների տրամադրում) կարիք կունենան, որպեսզի կարողանան ճշգրիտ գրանցել և հասկանալ կասկածվող տարածքի տեղակայվածությունը:
- դ. Հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպությունների կողմից հավաքագրված տվյալները պետք է այլ ոլորտների (առողջապահություն, սոցապ, կրթություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, տեղեկատվություն) համապատասխան կազմակերպություններին տրամադրվեն ԱԳԱՄ-ի կողմից, եթե կա այդպիսի մարմին, կամ ուղղակիորեն իրականացնող կազմակերպությունների կողմից, որպեսզի նրանք ևս տեղեկացված լինեն ականների և ՊՊՄ վտանգների մասին: Դա կօգնի նրանց մարդասիրական օգնության և սոցիալտնտեսական զարգացման հետագա միջոցառումները պլանավորելիս:

7.4. Համայնքի մասնակցություն և լիազորում

Ռիսկային համայնքները պետք է, հնարավորության դեպքում, ակտիվորեն մասնակցեն կարիքների գնահատմանը: Համայնքի ներգրավումն ու մասնակցությունն (թե գնահատման և թե առաջարկվող նախագծերում) ապահովելու ձևերը հարկավոր է նախատեսել կարքիների գնահատումը պլանավորելու ընթացքում:

Հնարավորության դեպքերում հարկավոր է կիրառել մասնակցային մոտեցումներ, որպեսզի համայնքը ԱՎԻ նախագծի մեկնարկի պահից շահագրգռված լինի մասնակցել և ստանձնի այդ աշխատանքների իրականացումը: Այդ նպատակով՝

- ա. Թիրախային համայնքը, որը կարող է ներառել տեղական իշխանությունները, պետք է լինի գնահատման կիզակետը:
- բ. Գնահատումը պետք է կատարվի համայնքի լիարժեք մասնակցությամբ (թեև արտակարգ իրավիճակների դեպքում այդ մասնակցությունը կարող է սահմանափակվել):
- գ. Նախագծի կենսունակությունը որոշելիս հարկավոր է հաշվի առնել տեղական համայնքի կարողությունները և նախատեսվող աշխատանքերին մասնակցության շահագրգռվածությունը և հավանականությունը:
- դ. Համայնքը պետք է մասնակցի գնահատման նպատակները սահմանելուն:

7.5. Տեղեկատվության կառավարում և փոխանակում

ԱՎԻ կարիքների գնահատում կատարող կազմակերպությունները՝

- ա. Պետք է հիմնվեն ՀԱԳԸԳ ժամանակ ստացված տեղեկությունների վրա, ինչպես օրինակ արտակարգ իրավիճակների կամ ԱԱՀ, տեխնիկական հետազոտման կամ ՀԱԳ ազգային տվյալների բազայում ականագերծման մասին մուտքագրված, ականների/ՊՊՄ-ից տուժածների փաստաթղթերում առկա, ինչպես նաև թիրախային համայնքների կարողությունները և խոցելիությունը գնահատող այլ ուսումնասիրությունների տվյալների վրա:
- բ. Պետք է կիրառեն այն տերմինները և դասակարգումը, որը համապատասխանում է հակաականային գործողությունների ազգային տեղեկատվական համակարգին, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են կիրառել ազգային մակարդակում սահմանված տվյալների հավաքագրման ձևաթերթիկներ:
- գ. Տեղեկությունների փոխանակումը հեշտացնելու նպատակով պետք է մուտքագրեն կամ մուտքագրման համար տրամադրեն ԱԳԱՄ-ին հակաականային գործողությունների ազգային տեղեկատվական համակարգում հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը, ինչպես օրինակ ԱԳՏԿՀ:
- դ. Պետք է օգտվեն բոլոր հնարավոր տեղեկատուներից, ինչպես օրինակ գյուղի ավագանին, նախկին զինվորականներ, կանանց խմբեր, գյուղի սակրավորներ, ուսուցիչներ, դպրոցից դուրս մնացած երեխաներ, կրոնական խմբեր:

7.6. Թիրախի ճիշտ ընտրություն

Կարիքների գնահատումը պետք է դիտարկի տարբեր խմբերի կարիքները, խոցելիությունը և ակնկալիքները և պետք է նրբանկատ լինի մշակույթի, սեռի, տարիքի և այլ հարցերի նկատմամբ:

Գնահատման ժամանակ հարկավոր է ուսումնասիրել համայնքի սոցիալական ցանցը, ծանոթանալ հիմնական ակտիվ դերակատարներին, տեղական զարգացման հանձնախմբերին:

7.7. Կրթում/իրագրելում

Կարիքները գնահատելիս հարկավոր է պարզել կրթման և իրագրելման հետ կապված տեղական կարիքները և կարողությունները: Պետք է հավաքագրվեն առկա հմտությունների, գիտելիքների, վերաբերմունքի, կառուցվածքների և ընդունված կարգերի մասին տեղեկություններ, որոնք կարող են օգնել նախատեսված նախագծերի իրականացման ժամանակ (օրինակ հաշվի առնել հանրային տեղեկատվության տարբեր խմբեր կամ հավասարը-հավասարին սկզբունքով իրականացվող իրագրելման նախագծեր): Կարող են հավաքագրվել հետևյալի մասին տեղեկություններ՝

- ա. Պաշտոնական և ոչ պաշտոնական կրթական համակարգեր,
- բ. Գործող տեղական կրթական/ուսուցման կարողություններ,
- գ. Սովորելու/ընկալելու առումով համայնքի ուժեղ և թույլ կողմերը,
- դ. Համայնքի ներսում իրագրելման/գիտելիքների տարածման աշխատանքներ կատարելու կարողությունները:

Կարիքների գնահատումը ենթադրում է նաև այնպիսի տեղեկությունների հավաքում, որոնք անհրաժեշտ են հասկանալու համար, թե ինչ ուղերձ, ինչ ուսումնական ծրագիր և ուսուցանելու տեխնիկա է հարկավոր կիրառել: Մասնավորապես՝

- ա. Տեղական անվտանգության ռազմավարությունները մշակելիս հարկավոր է համայնքի մասնակցությունը: Սա մասնավորապես վերաբերում է ականագրեման հարցերով համայնքի հետ կապի ապահովման ծրագրի շրջանակներում Ֆանվտանգ գյուղ՝ ռազմավարություններում ներգրավված գյուղերին:
- բ. Հարկավոր է գնահատել համայնքում առաջին բուժօգնության կետերի, բուժհաստատությունների տեղակայվածությունը և տուժածների տարահանման ընթացակարգերը, որը կօգնի մշակել ԱՎԻ ուղերձներ:
- գ. Հարկավոր է գնահատել հաղորդակցության տեղական ուղիները, համոզվելու համար, որ կապի ապահովման միջոցները առավելագույնս հարմար են ուղերձի ճիշտ ըմբռնումն ապահովելու համար:

Անվտանգության ուղերձները, անհրաժեշտության դեպքում նաև ուսումնական ծրագիրը պետք է հիմնված լինեն կարիքների գնահատման փուլում ձեռք բերված տեղեկությունների վրա, որպեսզի հնարավոր լինի սովորեցնել ճիշտ վարքագիծ ականների/ՊՊՄ վտանգները կրճատելու համար: Տվյալների հավաքագրման ժամանակ որոշվում են թիրախային խմբերը, նրանց հետ հարցազրույց է վարվում՝ հասկանալու համար վտանգի, խոցելիության, կարիքների և այլ հարցերի վերաբերյալ նրանց պատկերացումները, ուստի ուղերձները պետք է մշակվեն ըստ այդ տվյալների: Այդ գործընթացի միջոցով թիրախային խմբերը կմասնակցեն իրենց համար նախատեսված ուղերձների մշակմանը:

7.8. Ուսուցում

Կարիքների գնահատում կատարող մասնագետների ուսուցման նպատակն է ապահովել, որ բոլոր մասնագետները՝

- ա. Հասկանան տվյալների հավաքագրման նպատակները և դրանց վերլուծման կարգը,
- բ. Ծանոթ լինեն անվտանգության չափորոշիչներին, որոնք կիրառվելու են գնահատման ժամանակ և չենթարկվեն անտեղի ռիսկի,

- գ. Անցնեն համապարփակ և շարունակական ուսուցում, մասնավորապես կապված կարիքների գնահատման նպատակով տվյալների հավաքագրման նորմերի և էթիկական չափորոշիչների հետ:

8. Պարտավորություններ

Այն դեպքերում, երբ կոնկրետ դերերը և պարտականությունները սահմանված չեն, ընթերցողը պետք է կարդա ՀԱԳՄՉ 07.11-ը *Ականների վտանգի իրազեկմանն ուղղված գործողությունների կառավարման ուղեցույց*:

8.1. Միացյալ ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ը՝

- ա. Պետք է ապահովի, որ ԱՎԻ կարիքները գնահատվեն և համապատասխան ԱՎԻ կատարվի ՄԱԿ-ի բոլոր նոր և ընթացիկ հակաականային գործողությունների ծրագրերում,⁴
- բ. Պետք է օժանդակի ԱԳԱՄ-ին կամ վերջինիս բացակայության դեպքում՝ հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպությանը գնահատելու ԱՎԻ կարիքները,
- գ. Պետք է օժանդակի ԱԳԱՄ-ին կամ վերջինիս բացակայության դեպքում՝ հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպությանը ստեղծելու հակաականային գործողությունների տեղեկատվության կառավարման համակարգ, ինչպես օրինակ ԱԳՏԿՀ:

8.2. Ականազեծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ վերջինիս անունից հանդես եկող կազմակերպությունը պետք է՝

- ա. Ապահովի ԱՎԻ կարիքների գնահատումը՝ օգնելով հավաքագրել տվյալները, իսկ անհրաժեշտության դեպքում համակարգելով և մշտազննելով տվյալների հավաքագրումը և կարիքների գնահատումը՝ ազգային կամ միջազգային չափորոշիչների համաձայն:
- բ. Ստեղծի տվյալների բազա՝ հակաականային գործողությունների տեղեկատվական ազգային համակարգի շրջանակներում, ԱՎԻ կարիքների գնահատման նպատակով հավաքագրված տվյալների, ինչպես նաև ԱՎԻ գործողությունների հետագա համակարգման և մոնիտորինգի կառավարման համար: ԱԳԱՄ-ը պետք է ապահովի, որ այս տեղեկությունները տրամադրվեն բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին (նվազագույնը՝ հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպություններին):
- գ. Հակաականային գործողություններ իրականացնող կազմակերպությունների կողմից հավաքագրված տվյալները տրամադրի այլ ոլորտների (առողջապահություն, սոցալ, կրթություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, տեղեկատվություն) համապատասխան կազմակերպություններին, որպեսզի նրանք ևս տեղեկացված լինեն ականների և ՊՊՄ վտանգների մասին:

4. ՄԱԿ մանկական հիմնադրամի հակաականային գործողությունների 2002/2005թթ նազմավարության նպատակ 1.1, էջ 9

- դ. Ապահովի, որ բոլոր կողմերը կարողանան ծանոթանալ գնահատման հաշվետվություններին,
- ե. Նպաստի դոնորների կողմից կարիքների գնահատման ֆինանսավորմանը, ըստ անհրաժեշտության,
- զ. Ապահովի, որ ցանկացած ԱՎԻ կարիքների գնահատում ներառի տեղեկությունների այլ կազմակերպություններ (թե հակաակնային գործողությունների և թե այլ մարդասիրական և զարգացման ոլորտների) պլանավորած գործողությունների և ռազմավարությունների մասին, ըստ անհրաժեշտության,
- է. Ուղեցույցներ տրամադրի կարիքների գնահատման համար
- ը. Հրատարակի և այլ համապատասխան կազմակերպություններին տրամադրի գնահատման արդյունքները:

8.3. ԱՎԻ կազմակերպություն

ԱՎԻ իրականացնող կազմակերպությունը պետք է՝

- ա. Տրամադրի հավաքագրած տվյալները ԱԳԱՄ-ին, ըստ հնարավորության,
- բ. Իրականացնի գնահատումներն ըստ ՀԱԳՄՉ և/կամ ազգային չափորոշիչների համապատասխան, ըստ հնարավորության,
- գ. Ներգրավի առաջնային շահագրգիռ կողմերին (այսինքն վտանգված համայնքի անհատներին և իշխանություններին) գնահատման աշխատանքներում և նրանց հետ կիսի գնահատման հետ կապված տեղեկությունները,
- դ. Տեղեկությունները տրամադրի այլ հետաքրքրված կողմերին (օրինակ հիմնական կազմակերպություններին և իշխանություններին):

8.4. Դոնորներ

Դոնոր կազմակերպությունները՝

- ա. Պետք է զետեղեն տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման աշխատանքների ֆինանսավորման մասին դրույթ ԱՎԻ կազմակերպությունների հետ կնքվող համաձայնագրերում,
- բ. Պետք է ԱՎԻ կազմակերպությունների հետ կնքվող ֆինանսավորման մասին համաձայնագրերում հստակ սահմանեն, որ տվյալների հավաքագրումը և կարիքների գնահատումը պետք է կատարվեն ՀԱԳՄՉ և/կամ ազգային չափորոշիչների համապատասխան:
- գ. Պետք է գործողությունները համակարգեն այլ դոնոր կազմակերպությունների հետ՝ անտեղի կրկնություններից խուսափելու համար,
- դ. Կարող են մասնակցել գնահատմանը:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հասկացումներ;
- բ) ՀԱԳՄՉ 07.11 Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման ուղեցույց;
- գ) ՀԱԳՄՉ 08.10 Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատում:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ **(Ճանաչողական)** **Տերմիններ, սահմանումներ և հապավումներ**

Բ.1.

Համայնքի հետ կապի ապահովում

Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դրա ընթացքում և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

Բ.2.

Մարդասիրական ականազերծում

Գործողություններ, որոնք տանում են դեպի ականների և ՊՊՄ վտանգի վերացում, ներառյալ տեխնիկական հետազոտումը, քարտեզագրումը, ականազերծումը, նշագրումը, հետականազերծման փաստաթղթերի կազմումը, ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը և ականազերծված/մաքրված տարածքների հանձնումը: Ականազերծումը կարող է կատարվել տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, ինչպես օրինակ հասարակական կազմակերպությունները, առևտրային ընկերությունները, ականազերծման գործողությունների ազգային թիմերը կամ զինվորական ստորաբաժանումները: Ականազերծումը կարող է հիմնված լինել արտակարգ իրավիճակների վրա կամ լինել զարգացումնային:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականների և ՊՊՄ վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծումը համարվում է հակաականային գործողությունների միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծում և մարդասիրական ականազերծում տերմինները համարժեք են:

Բ.3.

Կրթում

Սովորեցնելու և սովորելու միջոցով ժամանակի քնթացքում գիտելիքների (փաստերի, գաղափարների, ճշմարտության կամ սկզբունքների իմացություն կամ տիրապետում), վերաբերմունքի և փորձի տրամադրում և ձեռքբերում: [Օքսֆորդի անգլերենի համառոտ բառարան]:

Բ.4.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉՁ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ): (ՄՈԶ արձանագրություն V):

Բ.5.

Ուղեցույց

ՀԱԳՄՉ ուղեցույց, որը ներկայացնում է ընդհանուր կանոններ, սկզբունքներ, խորհուրդներ և տեղեկություններ:

Բ.6.

ԱԳՏԿՀ

Ականազերծման գործողությունների տեղեկատվության կառավարման համակարգ (ԱԳՏԿՀ)

Նշում՝ Սա ՄԱԿ-ի կողմից օժանդակվող դաշտային ծրագրերի կարևորագույն տվյալների կառավարման նպատակով ՄԱԿ-ի նախընտրված տեղեկատվական համակարգն է: Դաշտային մոդուլը (ԴՄ) նախատեսում է տվյալների հավաքագրում, տեղեկությունների վերլուծություն և ծրագրի/նախագծի կառավարում: Այն կիրառվում է ականազերծման գործողությունների կենտրոնների (ԱԳԿ) կողմից կենտրոնական և տարածքային մակարդակներում և ականազերծման գործողությունների ծրագրեր իրականացնողների կողմից, ինչպես օրինակ ականազերծող կազմակերպությունները:

Բ.7.

Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)

Միջազգային համայնքի անունից ՄԱԿ-ի կողմից կազմված փաստաթղթեր, որոնց նպատակն է բարձրացնել հակաականային գործողությունների անվտանգությունը և արդյունավետությունը՝ ուղեցույց տրամադրելու, սկզբունքներ սահմանելու և որոշ դեպքերում, միջազգային պահանջներ և մասնագրեր սահմանելու միջոցով:

Նշում՝ ՀԱԳՄՉ հանդես են գալիս որպես տեղեկատու փաստաթղթերի համակարգ, և որոշ դեպքերում պահանջվում է, որ ականազերծման ծրագրերի և նախագծերի հովանավորներն ու ղեկավարները ապահովեն և ցուցադրեն արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակ:

Նշում՝ ՀԱԳՄՉ ապահովում են մեկ միասնական/ընդհանուր լեզու, և առաջարկում են տվյալների հավաքման, մշակման և վարման ձևաչափը և կանոնները, որը թույլ է տալիս ազատորեն փոխանակել տեղեկությունները: Այս փոխանակումից շահում են այլ ծրագրեր և նախագծեր: Բացի այդ, տեղեկությունների փոխանակումը օգնում է կատարել ռեսուրսների հավաքագրում, գերակայությունների սահմանում և կառավարում:

Բ.8.

Ականների ազդեցության հետազոտում (ԱԱՀ)

Ազդեցության հետազոտում

Ականների և ՉՁ փաստացի կամ ենթադրյալ ներկայության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում, հակաականային գործողությունների ծրագրերի և նախագծերի պլանավորման և առաջնահերթությունների սահմանման նպատակով:

Բ.9.

Ական

Զինամթերքի տեսակ, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու համար, որը մարդու կամ սարքավորման անմիջական ներկայությունից, մոտ գտնվելուց կամ շփումից պայթում է: [MBT]

Բ.10.

Հակաականային գործողություն

Գործողություններ, որոնք նպատակ ունեն մեղմել ականների և ՊՊՄ սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը:

Նշում՝ Հակաականային գործողությունը չի ենթադրում միայն ականազերծում: Այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը և ականների ու ՊՊՄ աղտոտման թողած ազդեցությանը: Հակաականային գործողության նպատակն է կրճատել ականների և ՊՊՄ վտանգը, այն հասցնելով այնպիսի աստիճանի, որը թույլ կտա, որ մարդիկ ապրեն անվտանգ կյանքով, սոցիալ-տնտեսական և առողջապահական ոլորտները կգարգանան առանց ականների և ՊՊՄ աղտոտման արդյունքում ստեղծվող խոչընդոտների և տուժածների կարիքները կբավարարվեն: Հակաականային գործողությունը պարունակում է գործողությունների հետևյալ հինգ փոխլրացնող խմբերը.

- ա. ԱՎԻ,
- բ. Մարդասիրական ականազերծում, այն է ականների և ՊՊՄ հետազոտում, քարտեզագրում, նշագրում և ականազերծում,
- գ. Օգնություն տուժածներին, այդ թվում վերականգնողական միջոցառումներ և հասարակության մեջ վերահիստեզրում,
- դ. Զինամթերքի պաշարների ոչնչացում և
- ե. Հակահետևակային ականների օգտագործման հակաքարոզչություն:

Նշում՝ Պահանջվում են մի շարք այլ օժանդակող գործողություններ նշյալ հակաականային հինգ բաղադրիչների իրականացման համար, այդ թվում գնահատում և պլանավորում, ռեսուրսների հավաքագրում և առաջնահերթում, տեղեկատվության կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և ղեկավար անձնակազմի ուսուցում, որակի կառավարում և արդյունավետ, ճիշտ և անվտանգ սարքավորումների կիրառում:

Բ.11.

Ականների մասին իրազեկում

Տես ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ):

Բ.12.

Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)

Գործողություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականի կամ ՊՊՄ պայթեցման արդյունքում վնասվածքի վտանգը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում հանրային տեղեկատվության տարածումը, իրազեկումը և ուսուցումը, ինչպես նաև հակաականային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը:

Բ.13.

ԱՎԻ կազմակերպություն

Ցանկացած կազմակերպություն (պետական, հասարակական կամ քաղաքացիական հասարակության, ինչպես օրինակ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություն և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ: ՏԱՎԻ ենթամիավորի տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավաստագրված է կատարելու նախատեսված մեկ կամ ավելի ԱՎԻ գործողություն, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

Բ.14.

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչությունները, կազմակերպությունները կամ հաստատությունները, որոնք պատասխանատու են ականազերծման գործողությունների կարգավորման, կառավարման և համակարգման համար:

Նշում՝ Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից:

Նշում՝ Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ և իրականացնելու գործառնությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ:

Բ.15.

Հանրային տեղեկատվության տարածում

Ականների կամ ՊՊՄ մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են ազգաբնակչության իրազեկելու կամ ունեցած տեղեկությունները թարմացնելու համար: Այն կարող է վերաբերել որոշակի հարցերի, ինչպես օրինակ ականների արգելման մասին օրենսդրության պահպանումը կամ կարող է օգտագործվել հակաականային գործողությունների ծրագրին հանրության կողմից ցուցաբերած օժանդակությունն ուժեղացնելու համար: Այսպիսի նախագծերը, սովորաբար, պարունակում են ռիսկի կրճատման մասին ուղերձներ, սակայն կարող են օգտագործվել նաև արտացոլելու համար հակաականային գործողությունների ազգային քաղաքականությունը:

Բ.16.

Ռիսկ

Վնասի հավանականության և դրա ուժգնության համադրությունը: [ISO ուղեցույց 51:1999(E)]

Բ.17.

Փրկվածներ (ական/ՊՊՄ)

Անձինք, ովքեր կամ անհատապես, կամ հավաքական կերպով կրել են ֆիզիկական, հուզական կամ հոգեբանական վնաս, տնտեսական կորուստ կամ ում հիմնարար իրավունքները զգալիորեն տուժել են ականների կամ ՊՊՄ-ի առկայության հետ կապված գործողությունների կամ սխալների արդյունքում: Ականների/ՊՊՄ փրկվածների թվում են անմիջականորեն վնաս կրած անձինք, նրանց ընտանիքները կամ ականներ/ՊՊՄ պատված տարածքներ ունեցող համայնքները:

Բ.18.

Չպայթած զինամթերք (ՉՉ)

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հազեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

Բ.19.

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ)

ՄԱԿ-ի համակարգում ականների հետ կապված բոլոր գործողությունների համար պատասխանատու հիմնական մարմին:

Նշում՝ ՄԱԿԱՕ-ը ՄԱԿ-ի քարտուղարության կառուցվածքային միավոր է, որը պատասխանատու է միջազգային համայնքի կողմից կիրառելու նպատակով ՀԱԳՄՉ մշակման և պահպանման համար:

Նշում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ԱՎԻ-ի հիմնական մարմինն է և ենթակա է ՄԱԿԱՕ-ի ընդհանուր համակարգմանը:

Բ.20

Տուժած

Անձ, ով վնաս է կրել ականի կամ ՊՊՄ վթարի/դժբախտ պատահարի արդյունքում:

Նշում՝ Տուժածներին ցուցաբերվող օգնության առումով, տուժած տերմինը կարող է ներառել ականի/ՊՊՄ պատահարից կախյալներին, ուստի ավելի լայն հասկացություն է, քան փրկվածը:

Բ.21.

Գյուղի կողմից ականազերծում

Ականապատված/ՊՊՄ ունեցող տարածքների ինքնուրույն ականազերծում և վտանգավոր տարածքների նշագրում, որը սովորաբար արվում է տեղի բնակիչների կողմից, ովքեր գործում են սեփական անձի կամ իրենց համայնքի անունից: Հաճախ նկարագրվում է որպես *ինքնուրույն ստանձնված նախաձեռնություն կամ տարերայնորեն իրականացվող ականազերծում*: Գյուղի կողմից ականազերծումը սովորաբար կատարվում է պաշտոնական հակաականային գործողություններ իրականացնող այնպիսի կառույցներից /գործողություններից անջատ կամ դրանց զուգահեռ, ինչպիսիք են զինվորականների կողմից կատարվող ականազերծումը, կամ ՄԱԿ-ի, միջազգային կամ տեղական ԿՀ-ների, մասնավոր ձեռնարկությունների, պետության կամ այլոց կողմից օժանդակվող մարդասիրական ականազերծումը:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1.12.2004թ	1. Փոփոխությունների ձևաչափի որոշում: 2. Տեքստի փոքր խմբագրական փոփոխություններ: 3. Տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության, ապահովելու համար, որ այս ՀԱԳՄՉ համահունչ է ՀԱԳՄՉ 04.10-ին:
2	23.07.2005թ	1. Հավելված Բ, «Ականների վնասի իրազեկում (ԱՎԻ, MRE)» տերմինի փոփոխություն, որպեսզի այն համահունչ լինի ՀԱԳՄՉ 04.10-ի հետ:
3	1.08.2006թ	1. Փոքր փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. «Ականներ և ՊՊՄ » տերմինի ավելացում: 3. ՀԱԳՄՉ-ի ամբողջ տեքստից «սպառնալիք» բառը հանել: